

ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ

ՍԵՄԻՏԱԿԱՆ ԲԱՌԵՐ ՀԱՅԵՐԷՆՈՒՄ

ՀԱՐ-ՀՈՐ-ՀՈՒ-ՀԻՐ

Գրաբարում գործածող, «չար» ածականը և աշխարհիկ դաւառաբարբառում հանդիպող «չոռ» գոյականի իրար հետ կապուած լինելը վաղուց էր գրաւել իմ ուշադրութիւնը, որ բէլիէֆ կերպով արտայայտուեց արաբերէնի ուսումնասիրութեանս առեւն: «Նր», «շրր» արմատը արաբերէնում ունի քանի մի իմաստ, որոց կենտրոն է կազմում չարւոյ գաղափարը: Այսպէս «շարրա» (شر) բայից կազմուած «շարր» (=շարրոն—شر) գոյականը նշանակում է—չարութիւն, թշնամութիւն, աղետ, մեաս, անարդարութիւն, կոխ, ախտ...

Միւս կողմից նոյն «շարր»-ը իբրեւ ածական անուն (յոգնակի—«աշրար»—اشرار) արտայայտում է չարի, վատի գաղափար. նոյնպէս և նոյն «շարրա» բայի ներգործական դերբայը՝ սեռի*) شَرَّ—շարրիրը: «Ն» հնչիւնն արաբերէնից փոխւում է հայերէն «չ»-ի, ինչպէս և «չ»-ն փոխւում է արաբերէն «շ»-ի, քանի որ արաբերէնը չունի «չ» հնչիւնը. դրան նպաստում է այդ երկու հնչիւնների միատեսակ լեզուային արտասանութիւնը, թէև «չ»-ն շարունակ «չ»-ի չէ փոխարկւում: Հետեւապէս «շարր»-ի փոխարէն մեր լեզւում «չար[ր]» տեսնելը տարօրինակ չափաի լինի (ինչպէս և «շարան»-ը=թուկ, պարան, փոխարկւում է «չա-

*) Արաբերէնում նկատուում է երկու դերբայ—ներգործական և կրաւորական, որ, «կատարա» (كَبَّ) բայից կազմւում է կատիր (كاتب)=գրող, գրել և مَكْتُوب—մակտուբ=գրուած, նամակ:

թուռ-ի նոյն իմաստով): Մնում է միայն ուշադրութեան առնել մի հանգամանք: Արաբական լեզուն, ինչպէս և առհասարակ սեմիտական լեզուները հիմնաւոր արմատներ ձայնաւոր հնչիւններով չեն ճանաչում: Եյնտեղ բառերի զանազան բարդութիւններ ստացւում են գլխաւորապէս ձայնաւորների անհաստատ տատանութիւններից: Մինչդեռ հայերէնը, ինչպէս և հնդեւրոպական լեզուները հիմնւում են ֆլէկտիայի—ածման օրէնքի վրայ, ուր արմատն ինքը չը փոխուելով ստանում է սկզբից և յետեից զանազան բաղադրիչ մասնիկներ: Հետեւապէս «շար[ր]»-ը իբրեւ արմատ հայերէնին չի կարող ծառայել, քանի որ նա փոխւում է և «շիրր»-ի և «շուրր»-ի: Այս իսկ պատճառով եթէ մենք չ'ցանկանանք «շար»-ը զատուած սովորական փոխառնութիւն ընդունել արաբերէնից հայերէնում, պէտք է որ գտնենք «շրր» արմատի «ուռ»-ի կամ «իւ»-ի ձևակերպում զուգընթացաբար մեր լեզւում գործածւող: Եւ իրօք օժանդակում է մեզ «շարր»-ի իբրեւ գոյական գործածւող իմաստը հայերէնում: Վերը յիշեցինք, որ ածական «շարր»-ը (յոգն. «աշրար» — اشرار) նոյնաձև գործ է ածւում արաբերէնում և իբրեւ գոյական, որի յոգնակին ինքն ըստ ինքեան լուծում է հարցի դժուարութիւնը, այդ յոգնակին ունի մեր գաւառաբարբառներում (գուցէ և հին գրաբարում) իր զուգադիպ նոյնանիշ ձևը, արաբերէն շուրուր (شور), հայերէն—«չոռ»: որ նման արաբերէնին ունի փաստի, աղետի իմաստ (համեմատել «չոռը քեզ», «չոռը բկիդ», «չոռ ու ցաւ՝ քեզ» դարձուածները): Ինչ վերաբերում է «ու» հնչիւնին պիտի ասել, որ դա առաջացած է երկու «ր»-երի միացումից, քանի որ ինչպէս յայտնի է, հայ լեզուն ը-երի մօտ հարեանութիւն չի սիրում (Սարրա = Սարըրա = Սառա, Մարր = Մառ), ուրեմն «շարր» ձևափոխուելով շառ-ի կամ շառ-ի, համաձայն յոգնակի ու ի օրէնքի, ստացուել է վերջնական «չոռ» ձևը:

Նոյն «շարրա» (شور) բայը ունի մի այլ նշանակութիւն և արաբերէնում, իմա — դնել մի ինչ որ իր արևի տակ

չորացնելու համար. ուրեմն զբա գոյականը՝ «շարր» (شر), որ նշանակում է չորացումն, չոր, չորութիւն, հաւանական է, որ վերը յիշած օրէնքների հիման վրայ ձևակերպուելով «չոր»-ի հանդիսանում է նախատիպ հայերէն «չոր»-ի, մանաւանդ որ «շարրա» — չորացնել կրաւորականում ստանում է «շուրրա» (شر) ձևը, որ նշանակում է — չորացուել, չորանալ, այստեղից է՝ «շիր»:

Այսպէս ուրեմն հայերէն «շար» և «շուր»-ը մի կողմից և «չոր»-ը՝ միւս ըստ երևոյթին պիտի որ լինեն ձևափոխութիւն արարերէն «շարրա» բայից կազմուած բաղադրութեանց: «Չոր» և «շար» ածականներից «ան» ածանցով կազմւում են «չորանալ» և «շարանալ» չեզոք բայերը, մինչդեռ գաւառաբարբառային «շուր» գոյականը բայ չի կազմում:

Ման. «Շարր» գոյականը նոյն իմաստով գործ է ածւում մեր գաւառաբարբառում «շառ» ձևով (որ. «շառտ մարդ, շառը հետու է»):

շ ա ղ ի կ

Հետաքրքրական է և այս բառի ստուգաբանութիւնը, որի արտաքին ձևի և ներքին իմաստի նմանութիւնը արարական հոմանիշ «շաբիկ» (شابك) գերբայի հետ, հարկադրում է ընդունել զոցա նոյնութիւնը: «Շարական» բայը նշանակում է — կազմել, (переплетать) փաթաթել: Դրանից կազմուած «շարական»-ը (شبكة) — ցանց, իսկ գերբայը — شابك — շաբիկ՝ փաթաթող: Այստեղից կարելի է հանել մեր «շապիկ»-ի բուն իմաստը, որ է փաթաթող, պարուրող, ինչպէս երևում է աւելի բէլիէֆ կերպով դրաբարում:

Սակայն հաւանական համարելով այս բացատրութիւնը, չի կարելի աչքաթող անել և մի այլ՝ աւելի ընդունելի մեկնութիւն: Պարսկերէն «շէար» (شیر) = զիշեր — գոյականից հնարաւոր է «իկ» կամ «ակ» մասնիկի միջոցաւ (որ իրօք բուն պարսկերէն է և այնտեղից արդէն մտած մեր լեզուի մէջ) կազմել «շէարակ» կամ «շէարիկ» (شيك) բառը, որ նշանակում է «զիշերային» (համեմատել

փուշիդէն پوشیدن — հագնել բայի արմատից կազմուած փուշակ-ը پوشاك — զգեստ, ևս خوردن-ից «խորդէն ուտել» — «խորագր» — خوراكى — ուտելիք, կերակուր):



2 III III

«Տ»-ի և «դ»-ի նմանահնչիւնութիւնը հանդէս է բերում և մի այլ արմատ մեր հին գրոց լեզուով՝ կապուած արաբական լեզուի հետ: Դա հայերէն «շատ» մակբայածականն է, որի բուն էութիւնը հին գրաբարում էրազում, մեծ, ուժգին (հմտ. օր. «նապուհ արքայ պարսից Արշակայ թագաւորի հայոց ողջոյն շատ» — Մատենագիրք V դար): Պարսկերէնում (թէ նոր և թէ հին) դոյութիւն ունի համանուն մի բառ՝ «շադ» (شاد ևս شادمان ուրախութիւն, հաճոյք իմաստով, որ և մտել է նոյն նշանակութեամբ գրաբար միայն թէ ոչ ինքնուրոյն գործածութեամբ (օր. Արտաշատ — ուրախութիւն Արտաշէսի): Հետեւաբար կաղմել հայերէն «շատ»-ը (բազում) պարսկերէն «շադ»-ի (ուրախ) հետ դժուար է ընդունել հաւանական, թէև ժամանակի ընթացքում ուրախութեան գաղափարը կարող էր իր բարձր, անբնական իմաստ արտայայտող էութեամբ փոխուել ուժեղ-ի, մեծ-ի հասկացողութեան: Աւելի իրաւացի կլինէր բոս իս ենթադրել «շատ»ը թեթև ձևակերպում արաբական նոյնանիշ شاد (շադդ)-ի, որը իրօք նշանակում է — ուժեղացում, եռանդ, սաստիկ շարժում («շադդա» բայից — ուժեղացնել, սաստկացնել, լինել մեծ-ուժեղ), իսկ դրա դերբայը՝ շադիդ (شد) արտայայտում է — ուժեղ, ամուր, ծանր գաղափարները: (Այդ ամեն մըտքերը գործածական են այժմ աշխարհաբարում — ինչպէս օրինակ, «շատ մի ծեծիր, շատ վաղեցի, նրա ոյժը շատ է» և այլն):

Պարզ է, որ թէ մեր «շատ»-ը և թէ «շար»-ը իր բոլոր ձևակերպումներով (որոնք՝ «չիր»-ը և «չոռ»-ը՝ սակայն գործածական չեն գրաբարում) հետեւանք չէ Ղ-րդ դարու

արարական անմիջական ազդեցութեան Հայաստանում, քանի որ դժբա դրանից շատ առաջ են գործածուելիս եղել մեր լեզուում միւս կողմից էլ պարսկերէնում այդ բառերի չլինելը, ևս — «չր» արմատի՝ նման արարերէնի՝ հայերէնում մի քանի ձևով գործածուելը ստիպում է աւելի խորը փնտռել երկու լեզուներում պատահող այդ զուգահիշ բառերի կապը:

կթ — քզ (Արգար)

Բաղաձայն հնչիւնների տեղափոխութեան մի հետաքրքիր երևոյթ է ներկայացնում Արգար յատուկ անունը, որ մինչև անցեալ դարը մեր աւանդական պատմութեան կողմից նանաչւում էր հարադատ հայոց լեզուին: Արգար էր կոչւում այն արքան Հայոց Միջագետքի Եդեսիա քաղաքի, որի ազգակիցները տիրապետում էին Մեծ Հայքին և որը նամակ է գրել Յուդայի Մեծ Քարողչին: Այսպէս է մեզ աւանդել մեր պատմագրաց նահապետ Խորենացին: այդպէս էլ շարունակել են վաւերացնել յետագայ մատենագիրները: Մինչդեռ նորագոյն հետազոտութիւնները, ապացուցում են, որ Միջագետքի Եդեսիայում (Օսրոենում) չէ թէ մի հատ Արգար է եղել, այլ ամբողջ տառն և մէկ — 381 տարուայ ընթացքում ¹⁾ և որ նոքա անվայման եղել են սեմիտական (արար) ծագման, որ և ապացուցւում է միւս կողմից հէնց «Արգար» բառի ստուգաբանութեամբ: Արաբերէնում «կրր» արմատը պատկանում է ամենատարածուած և ամենաշատ բաղադրիչ ունեցող արմատների շարքին: Հիմքը կազմում են «կարարա» (كِر — մեծանալ, լինել աւագ) և «կարուրա» (كِر — լինել նշանաւոր, հսկայ) բայերը, որոնցից կազմւում են 30—35 գործածական ձևեր ²⁾, դոցանից մէկն է «կարիր» (كِر — յոգն,

1) Տես «Очеркъ Исторіи Арменіи» проф Г. Халатянцъ 1910 г. Москва — стр. 141.

2) Տես «Арабско-Русскій словарь» М. Аттая. Москва 1913 г. էջ 613.

կիրար ۵۵) ածականը, որ նշանակում է մեծ, պատկառելի, նշանաւոր, զխաւոր: Ահա այս ածականի բաղդատական-դերադրական առաջինն է՝ «Ակրար» (۵۵) յոգն. — Ակրարունա ۵۵, ۵۵) որ երկու բաղաձայների տեղափոխութեամբ «Արգար» ձևով մտել է մեր լեզուի մէջ իբրև պսելդո-աղգային յատուկ անուն: Բնական է, որ անապատի դու զաւակները բաղդատական մակդիրով պատուէին իրենց՝ ազատների, մեծերի՝ առաջնորդին: Ժամանակի ընթացքում արդս տառախումբը քնքշաւ ալով մեր դաւաւարարրաւում, ստացուել է իր նախնական արարական արտասանութիւնը՝ «րկ» և «պկ» շրջուած ձևով (Արգար — Արկար — Ապկար):

Բացի յատուկ անուն լինելուց, Ակրար-ը արարերէնում գործ է ածւում և ամենօրեայ խօսակցութեանց մէջ: Ենչպէս և աղօթքներում: Նշանաւոր մահմեդական Տակրիրի Տիմքը ևս կազմում է սոյն մակդիրը — «Ալլահու տակրարուն» (۵۵) ۵۵): Առտուած մեծ է — կրկնում է շարունակ հաւատացեալն իր առօրեայ կեանքի ընթացքում:

Մի արմատ սակայն իր ձևակերպումներով անորոշ կացութիւն է ստեղծում իր ծագման հարցում: Արարերէն «մակասա» (۵۵=հարկ ժողովել) բայից կազմուած «մակս» (۵۵) գոյականը հարկ, տուրք, ունի հայերէնում չորս բաղադրեալ ձևեր (մաքս, մաքսաւոր [Աւետարանում], մաքսախոյս (մաքսանենք), մաքսային), որոնց գործածութեան հնութիւնը յամենայն դէպս 5-րդ դարուց դէնն է անցնում (տես Առտուածաշնչի «մաքսաւորը»: Եթէ չեմ սխալւում, նոր պարսկերէնում էլ չկայ այդ բառը (սրան համապատասխան է այնտեղ ۵۵—գոմրոգ գոյականը): Մնում է ուրեմն ենթադրել, որ դա եղել է մեզ անծանօթ միջին պարսկերէնում (փէհլեւիկ) և այնտեղից է մտել Հին Հայոց պարսկական վարչական տերմինների շարքը: Կամ թէ, եթէ հայ վաճառականների Միջագետքից Տիգրիս-Եփրատի վրայով հայրենիք բերած ժառանգութիւն չէ, դեռ ևս Քրիստոսից շատ դարեր առաջ, ապա դա մի ընդհանուր արմատ է հնդեւրոպական համարւող հայերէնի և սեմիտական լեզուների մէջ: